# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

## ՈՐՈՇՈՒՄ N 30

«29» նոյեմբերի 2019 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին

**որոշում է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը:

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի «Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին :

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը որոշելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 16 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 22 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ։
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ։

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՝

| | Կողմ՝ 4 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԱՐՇԱԿ ՍԵՐՈԲՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

«29»նոյեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

# ՈՐՈՇՈՒՄ N 31

«29» նոյեմբերի 2019 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ «ԱԼՎԱՆ ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով , հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավարի առաջարկությունը և այն հանգամանքը,որ մանկապարտեզը չի ջեռուցվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին

**որոշում է՝**

2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի մարտի 30-ը ժամանակավորապես դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի «Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ `

| | Կողմ՝ 4 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԱՐՇԱԿ ՍԵՐՈԲՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

«29»նոյեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

## ՈՐՈՇՈՒՄ N 32

«29» նոյեմբերի 2019 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 16 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի 1-ին կետով հաստատված օրինակելի աշխատակարգերի 5-րդ կետերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին

**որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկել ավագանու երկու անդամի:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկել ավագանու անդամներ Գարիկ Ռիգումյանին և Արշակ Սերոբյանին :

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամներ առաջադրելու մասին>> թիվ 16 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ 4 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| ՍԵՎԱԿ ԱԾԵՄՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԱՐՇԱԿ ՍԵՐՈԲՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

«29»նոյեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

## ՈՐՈՇՈՒՄ N 33

«29» նոյեմբերի 2019 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 22 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 11-րդ և 12-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է.

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ սահմանել Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմինե Հակոբյանին:

4.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2010 թվականի հուլիսի 9-ի թիվ 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 22 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՝

| | Կողմ՝ 4 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԱՐՇԱԿ ՍԵՐՈԲՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

«29»նոյեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

ՀԱՎԵԼՎԱԾ՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հայկավան
համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 29-ի
N 33 որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի

1.Հանձնաժողովի նախագահ՝

Արմինե Հակոբյան- (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար)

2.Հանձնաժողովի անդամներ՝

1)Սվետլանա Մխիթարյան (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն)

2)Ալինա Հովհաննիսյան (Հայաստանի Հանրապետության Շիրակի Հայկավան համայնքի ԲՄԿ-ի վարիչ)

3)Խաչատուր Շահինյան(Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու անդամ)

4)Վարդուշ Միհրյան (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԽՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

## ՈՐՈՇՈՒՄ N 34-Ն

«29» նոյեմբերի 2019 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 44-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Ծախսային մասում

1)«Պահուստային միջոցներ» 4891 հոդվածի 11.1.0 դասակարգման 2109.7 հազար (երկու միլիոն հարյուր ինը հազար յոթ հարյուր) դրամ թիվը և բառերը փոխարինել 1809.7 հազար (մեկ միլիոն ութ հարյուր ինը հազար յոթ հարյուր) դրամ թվով և բառերով:

2)«Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածի 1.6.1 դասակարգման 791.1 հազար (յոթ հարյուր իննսունմեկ հազար մեկ հարյուր) դրամ թիվը և բառերը փոխարինել 1091.1 հազար (մեկ միլիոն իննսունմեկ հազար մեկ հարյուր ) դրամ թվով և բառերով՝«Հայկավանի միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության կրտսեր դպրոցականներին և Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի «Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաներին նվերներ և Ամանորյա ներկայացման տոմսեր գնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ 4 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԱՐՇԱԿ ՍԵՐՈԲՅԱՆ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ ՝ | ---------------- | ---------------- | ---------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

«29»նոյեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան